# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոտայքկոշ ԲԲԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 35 | Կոշիկ սպայական, դասական Տղամարդու սպայական կոշիկը արտադրվում է սև գույնի, որակյալ բնական կաշվից` 1,6մմ հաստությամբ, մշակված անջրանցիկ ծածկույթով: Բաղկացած է վերնամասից, միջնատակից և արտաքին ներբանից : Կրնկամասը կոճերից ցածր, որը պետք ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերեսը: Պետք է ունենա կողքերից ձգող ժապավեն /շտիբլետ/: Միջնամասը` բիազ, 100% բամբակ: Ներսի ծածկույթը` ներդիրը և հետնամասի աստառը համապատասխան բնական կաշվից /մեշին/: Կոշկաքիթը և կրնկամասը ուժեղացված ջերմապլաստիկ նյութից: Միջատակը բաղկացած է իրար սոսնձով կարակցված բնական կաշվից /պադոշ/ և կոշիկի համար նախատեսված ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղյա սուպինատոր: Միջատակը վերնամասի հետ միանում է սոսնձման և կարման եղանակով: Արտաքին ներբանը` պոլիուրետան հումքից, երեսամասի հետ միացված է սոսնձման եղանակով: Ներբանի երկայնական կտրվածքի հաստությունը ոչ պակաս 5մմ: Արտաքին տեսքը` համաձայն պատվիրատուի տրամադրած նմուշի: Կոշիկը տակամասունն ունի դրոշմ, որի վրա պետք է նշված լինի չափսը, Ներսամասունն նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը, տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Արտադրվում են 39-46 չափսերի: Փաթեթավորումը` ստվարաթղթե արկղերով, արկղի մեջ 30 զույգ, տեսականին պետք է լինի ստվարաթղթե տուփի մեջ, մեկ տուփում` մեկ զույգ: Արկղերը` պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամին ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ |

| | |
|---|---|
| | 5 օրինակից, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման /շահագործման/ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (2 տարի), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը անհատույց փոխարինել նորերով, 10 օրվա ընթացքում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ОАО Котайккош в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 35 | |